

EDN: BTHCKF

Ամեն ինչ հարաբերական է,- նույնիսկ գավազանը՝ մեկի համար հենարան է, մյուսի համար՝ հարվածելու գործիք...

Վերջերս սփյուռքահայ բարեկամս ինձ հարց տվեց, թե Հայաստանում ինչու են այդքան հաճախ իշխանություններին քննադատում: Երկար մտածեցի, ծանր ու թեթև արեցի՝ իսկապես ինչո՞ւ: Մի կողմից պարզ է, որ անթերի իշխանություններ չկան, սակայն մյուս կողմից մի՞թե է հնարավոր է այք փակել այսքան, գրեթե փակուղի տանող թերացումների ու սխալների վրա: Նույնիսկ ինձ թույլ տվեցի մտածել, որ բոլոր նրանք, ովքեր ձգտում են դուր գալ ու սիրաշահել իշխանություններին, գովաբանել նրանց և օգուտներ քաղել, դա էլ է գուցե բիզնեսի ձև: Բայց անմիջապես էլ հասկացա, որ այդ ուղին կործանարար է, քանզի գրչի մարդը պատասխանատու է ոչ միայն իր, այլև իր լսարանի մտածելակերպը կերտելու համար: Իսկ անաչառ մտավորականը, այդ թվում նաև ես՝ շարքային հայ մտավորականս, իրավունք չունեմ, ուղղակի չեմ կարող, այդ կերպ: Որովհետև նախ՝ մարդ եմ, հայ եմ, պատմաբան, ժողորդավարության համամարդկային գաղափարների կրող ու դավանող, ընտանիքի հայր ու պապ, ալաշկերտցու ու մշեցու ժառանգ, երկարմյա դասախոս: Որովհետև վստահ եմ՝ նույնիսկ փակուղին ի սկզբանե ճանապարհ դառնալու միտք ունի, իսկ նպատակներին հասնում են պատենշներ քանդելով: Որովհետև գիտեմ, որ Աստված մարդուն իր ուժերից վեր փորձություն թույլ չի տալիս: Վարպետը բյուրեղապակյա կամ ապակե անոթին թեթևակի է հարվածում, որպեսզի այն չկտորվի, իսկ արծաթյա կամ պղնձյա անոթին ուժեղ է հարվածում: Այդպես տկարներին՝ թեթև, իսկ ամուրներին ծանր փորձություն է թույլ տրվում: Ինչպես երջանկությունը բարձրացնում է, այդպես էլ դժբախտությունը խոնարհեցնում է, և ինքնաճանաչությունը կարգի է հրավիրում մարդուն: Վերջապես հարկավոր է ձեռքագատվել կործանարար նյութապաշտությունից և հիշել, որ դեռ հին Հռոմում էին կարծում, որ հիմարություն է աղքատ ապրել հարուստ մեռնելու համար:

Հետո էլ յուրաքանչյուրս պիտի ըմբռնենք, որ մեր օրերում, երբ վտանգված են մեր պետականությունն ու մեր իսկ գոյությունը, խիստ առօրեական են հայ ժողովրդի զարգացման, անվտանգության և խաղաղ գոյակցությանն առնչվող հարցերը: Քանզի ստեղծվել է մի իրավիճակ, երբ՝ մի հիմար քարը զցել է ծովը և հազար խելոք չեն կարողանում հանել այն: Անհրաժեշտ է այսօր գիտակցել, որ մեր ընդհանուր քաղաքականության գաղափարախոսությունը պետք է լինի հետևյալը՝ միշտ շահել համագործակցության շնորհիվ, համակիրներ ու դաշնակիցներ ձեռք բերել: Երբեք չփորձել շահել ուրիշների կոնֆլիկտների հաշվին, որովհետև դա անհեռանկար, անհեռատես քաղաքականություն է: Իրականում մենք տեսել ենք, և ունենք մեր տարածաշրջանում օրինակներ, թե ինչի՞ կարող է հանգեցնել այն քաղականությունը, որ հակառակն է վարվում, այսինքն՝ փորձում է շահել ինչ-որ հակասությունների պայմաններում: Վստահաբար, դա մեզ համար ձեռնտու չէ: Միևնույն ժամանակ, պիտի հասկանանք, որ հայաստանյան հանրային դաշտը, օտար տեխնոլոգիաների ազդեցությամբ, ձեռնածությունների (մանիպուլյացիաների) ու էլֆորիայի մեջ (իրականությունից չբխող բարձր տրամադրություն՝ ուրախություն, անհոգության վիճակ) խրված, ի գորու չէ լսել խելացի և հիմնավորված կառավարում և հայանպաստ որոշումներ կայացնող գործչի խոսքը:

Հարկավոր է չմոռանալ նաև, որ ժամանակին կեղծիքը, ներքաղաքական և ներխմբային շահերը, հասարակությունը մոլորեցնելու և դրանից շահեկան եկամուտներ ունենալու ցանկությունը խլացրել էր շատերին: Նախկինների նկատմամբ ատելությունը հասավ մի հանգրվանի, երբ մարդիկ մոռացան Արցախի ապագայի, Հայաստանի ու հայ ժողովրդի անվտանգության, քաղաքականության դաժան պատիժների, մեր ժողովրդի պատմության դասերի և նույնիսկ սեփական ապագայի մասին: Նրանց թվում էր, թե տարբեր տեղերից հավաքված անկենսագիր ու բազմադեմ հատվածն իր համար երջանիկ ապագա և անհոգ կյանք էր բերելու: Իսկ փոխարենը մեծ ողբերգություն եղավ, համագային մարդկային ու տարածքային ծանր կորուստներ և կապիտուլյացիոն խայտառակություն:

Կարևոր հանգամանքներից մեկն էլ այն է, որ ցանկացած հակամարտություն միշտ հանգեցնում է տարբեր հակադիր ուժերի միջև էլ ավելի բևեռացման: Այն բևեռացումը, որ այսօր կա Ռուսաստանի, Միացյալ Նահանգների կամ Արևմուտքի միջև, իհարկե, հղի է ավելի մեծ վտանգներով, մեզ պարտադրում է շատ խելամիտ և հաստատակամ քաղաքականություն վարել: Չմոռանանք, որ մենք դաշնակիցներ ունեինք, մենք ունենք գործընկերներ, և պարտավոր էինք պահպանել խաղի այդ կանոնները: Գարտավոր էինք նաև ըմբռնել, որ հակառակ պարագայում, երբ ուղտը մեր դռան էլ

չորի, խիստ անհրաժեշտ կլինեն ինչպես դաշնակցային, այնպես էլ գործընկերային համապատասխան վերաբերմունք ապահովել: Այնինչ, այսօրվա վարչախմբի վարած քաղաքականությունն ու կառավարած Հայաստանը՝ Արցախի հետ միասին վերածվեցին ուրիշների կոնֆլիկտների հաշվին պարտված, բզկտված, ահաբեկված, կորցրած ու ապագայի անորոշությունների մեջ ընկղմված երկրի: Տպավորություն է, որ գործող կառավարիչներն իրենց աննախադեպ ձախողումների պարագայում անգամ, այսօր Հայաստանի հանրապետության ապագայի համար որևէ լուծում, տեսլական, իրական պատկերացումներ չունեն կամ չեն ուզում դրսևորել: Արդյունքում հեղափոխական Հայաստանն իր անպատասխանատու, անվստահելի ու կեղծիքածին քաղաքականության շնորհիվ մնացել է մենակ, առանց իրական դաշնակցի, առանց օգտակար գործընկերոջ ու բարեկամի, առանց սեփական ուժերով որևէ բան անելու հնարավորությունների և ընդունակությունների:

Վաղուց հայտնի ճշմարտություն է. փոքր պետություններն ուղղակի իրավունք չունեն անվտանգային և արտաքին քաղաքականության հարցերում սխալներ գործել: Փոքր պետությունների ղեկավարներն իրավունք չունեն մի կողմ թողնել իրենց ազգային շահերը և զբաղվել այլ տերությունների հակասությունների վրա սեփական իշխանությունը պահելու մոլուցքով: Դրա անդառնալի գինը՝ իրենց Հայրենիքի տարածքների, անկախության ու անվտանգության հաշվին, վճարում են ժողովուրդն ու նրա սերունդները: Ելքը մեկն է՝ փոքր պետությունները նման իրավիճակում իրենց մեջ պետք է ուժ գտնեն և արկածախնդիր և ձախողված իշխանություններից ձերբազատվեն: Ավելին, իշխանություն թե ընդդիմություն իրենց մեջ պիտի ուժ գտնեն համախմբվելու, բոլոր ռեսուրսներն ի մի բերելու, սառը և ճշգրիտ հաշվարկելու ստեղծված իրավիճակն ու ամենայն պատասխանատվությամբ վերաբերելու իրենց սերունդների ապագային: Քանի որ քաղաքականության մեջ, իմաստուն ազգերի (որպիսին մենք ենք մեզ համարում) ճակատագիրը որոշում են ոչ թե օտարները, այլ հենց իրենց պատասխանատու վերնախավը, որին ձևավորում են հենց ժողովուրդը և ոչ թե օտարները: Հարկավոր է հիշել, որ վերջին հաշվով ինքնաբավ մարդիկ ու ազգերը ոչ դուր գալու համար ջանքեր են գործադրում, ոչ էլ՝ կվախենում են դուր չգալուց...

Չեմ կարող չանդրադառնալ մի երևույթի ևս: Ակնհայտ երևում է, որ այսօր Հայաստանում իշխանության և պետականության ճգնաժամի ևս մի քանի հատկանիշներ էլ կան: Դրանցից մեկը գենդերային շեղումն է դեպի հակառակ կողմ: Հակառակ ընդունված սովորության՝ տղամարդկանց մի կողմ են դնում, և երկրի ուժային կառույցների ղեկավարներ ավելի հաճախ կանայք են դառնում: Իհարկե, անվիճելի է, որ կանայք էլ կարող են արժանի լինել բարձրագույն պաշտոնների: Բայց երկու սեռերի համար հավասար մեկ պայմանի դեպքում. բարձրագույն պետական պաշտոնների կարող են հավակնել միայն լուրջ պրոֆեսիոնալները, այնինչմերօրյա Հայաստանում հենց այդ գլխավոր պայմանը չի կատարվում: Իշխանական մարմինների առանցքային դիրքերում նշանակում են կին պաշտոնյաներ, որոնց փորձն ու պրոֆեսիոնալիզմը, մեղմ ասած, կասկածելի են: Բայց միևնույն ժամանակ ակնհայտ են Արևմուտքի հետ նրանց ուղիղ կապերը: Այսպես, գլխավոր դատախազի պաշտոնը զբաղեցնում է Միջազգային հարաբերությունների Թագավորական ինստիտուտի անդամ 38-ամյա Աննա Վարդապետյանը: Հայաստանի Արտաքին հետախուզության ծառայությունը ղեկավարում է մարդու իրավունքների նախկին պաշտպան Քրիստինե Գրիգորյանը, ով սերտ համագործակցում է Արևմուտքի հետ և Հայաստանում իրականացրել է վերջինիս շատ ծրագրեր: Նոյեմբերի սկզբին նրանց է միացել 32-ամյա Սրբուհի Գալյանը՝ գլխավոր դատախազի նախկին տեղակալը, ով նշանակվել է արդարադատության նախարար: Ներքին գործերի նոր նախարար է դարձել նրա 30-ամյա ընկերուհի Արփինե Սարգսյանը, ով նախկինում զբաղեցնում էր Ներքին գործերի նախարարի տեղակալի պաշտոնը: Ավելին, մամուլում շրջանառվող լուրերի համաձայն, Արևմուտքը պլաններ ունի, որ նրան պատրաստում են դարձնել Հայաստանի հաջորդ վարչապետ և այժմ հող են նախապատրաստում այդպիսի փոխարինման համար: Կարծում են, քանի որ արհեստական բանականության և ակնթարթային զարգացումների ժամանակաշրջանում ենք ապրում, ամեն ինչ հնարավոր է: Կապրենք, կտեսնենք:

Ապրենք, սակայն պետք չէ մոռանալ մեր արմատներն ու մեր պատմությունը, շրջանցել համազգային արժեքները, քանզի դա փակուղի կտանի: Պետք չէ հասնել այն մակարդակի, որ ինչպես Նժդեհն էր դառնացած ասում, հայության դժբախտությունն այն է, որ չգիտի իր պատմությունը, ինչպես և չգիտի օգտվել իր պատմությունից: Չմոռանանք նաև, որ անգամ ամենախավար գիշերից հետո, անսպասելի գեղեցիկ արևածագ է բացվում: Այո, կբացվի, քանի որ մեր արմատները շատ խորն են, բեղմնավոր, մենք հին ենք, բայց ոչ հնացած: Քանի որ ինչպես ասել է սովակ և չեխ բանաստեղծ, թարգմանիչ, լրագրող, քաղաքական գործիչ Վոյտեխ Միհալիկը. «Փայլուն և դժվարին ճանապարհ անցած հայ ժողովուրդը հրաշքներ է ստեղծել իր և համայն մարդկության համար: Հայաստանում Արիստոտել և Պլատոն էին թարգմանում այն ժամանակ, երբ Եվրոպայի մեծ մասում գրել ու կարդալ չգիտեին»:

Վերջապես պետք է շատ սիրենք մեր Հայրենիքը և հասկանանք, որ նույնիսկ նրա հանդեպ տածած սերը միշտ չէ, որ փոխադարձ կարող է լինել: Վերջերս շատ եմ մտածում, արդյոք հնարավոր է XXI դար թևակոխած աշխարհում, կամ առանձին երկրում ունենալ այնպիսի «բարոյական հեղինակություններ», ում կյանքը և գործունեությունն օրինակ կլինեն շատերի համար, կոզեչնչեն մարդկանց: Ովքեր կբարձրացնեն հիմնարար կարևորություն ունեցող ու բարոյական սկզբունքներին առնչվող հարցեր և իրենց կարծիքը հանրայնորեն լսելի ու ընդունելի կլինի: Թե այս երևույթը մնացել է այն ժամանակների համար, երբ նման մարդիկ անհասանելի բարձրունքում էին և առասպելականացվում էին: Ինչպես օրինակ ասենք Գանդին, Տոլստոյը, Մախարովը, Մանդելան, Խոմենինսկին սոցցանցերում կամ այսօրվա մեդիա ահաբեկչության պայմաններում եթե լինեին, արդյո՞ք կլինեին այնպիսին, ինչպիսին եղան:

Իսկապես խորհելու շատ բան կա, ցավոք, նաև՝ մեծ թվով անպատասխան հարցեր...

Сдана / Հանձնվել է՝ 24.11.2024

Рецензирована / Գրախոսվել է՝ 29.11.2024

Принята / Ընդունվել է՝ 03.12.2024